

# ԿԱՐԵՒՈՐ ԱՌԱՋԱՐԿ ՄԸ

Հայ գրի ու մտքի Մեծ Յոբելեանին ի պատիւ կազմուելիք կրթական հաս-  
տատութեան կարեւոր դրամագլուխ մը ձեռք բերելու համար կ'առաջարկե-  
ր աշխարհիս ամէն կողմերը ապրող բոլոր Հայերը պարտաւոր ըլլան վճարել  
ՆՈՒԱՋԱԳՈՅՆ ՉԱՓՈՎ 1ԱԿԱՆ ՂՐՈՒՇ, որոնց վրայ բարդել եղած ո-  
րչաւիք բացառիկ նուէրները: Լիայոյս եմ թէ ամէն ընտանիքի հայր մինչե-  
րսկ մուրացկանը, սիրայօժար պիտի վճարէ իր ընտանիքի անդամներու  
թիւին համեմատ համեատ գումար մը, զրկուելով նոյնիսկ օրուան մը հացըն-  
կեր (ղաթըխ) է, վայելելու համար անշուշտ անհուն ու անպատիր հոգեկան  
հրճուանք մը: Այս առաջարկս պէտք է Ազգ. Պատրիարքարանի կողմէ պաշ-  
տօնապէս ներկայացուի հայ հասարակութեան և այն ատեն ապահովապէս  
վստահ եմ թէ ՀԱՅ անունը կրող ամէն անհատ ինքնաբերաբար պիտի փո-  
թայ վճարել իր նուիրական պարտքը, գտնուած տեղին կամ թաղին Ազգային  
իշխանութեան:

ՅԱԿԹԷՐ